ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.02.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Հարությունյանը, Վ. Մկրտչյանը, Մ. Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝
  1 չափաբաժնի համար **«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ** –ին:

- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

- «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Հարությունյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Մ. Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան